



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 15 ԱՊՐԻԼ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՄՈՍ 112

ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԴՈՒՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Երանի՛ այն մարդուն, որ Տիրոջ երկիւղը ունի,  
եւ մեծ հանդիմով անոր պատուէրները կը կատարէ:  
Այնպիսի մարդուն սերունդը երկրի վրայ զօրաւոր պիտի ըլլայ.  
ուղիղ վարժով ապրող մարդոց զաւակները պիտի օրհնուին:  
Անոր ընտանիքը ինչքերու առատութիւն եւ հարստութիւն պիտի ունենայ,  
իսկ ինք Աստուծոյ աչքին յաւիտեանապէս արդար պիտի մնայ:  
Խաւարի մէջ լոյս կը ծագի ուղիղ վարժով ապրող մարդոց,  
բարեգութ, ողորմած եւ արդար մարդոց:  
Բարի մարդը գթասիրտ կ'ըլլայ եւ փոխ կու տայ ուրիշներուն,  
եւ իր գործերը արդարութեամբ կը վարէ:  
Այդ պատճառով ալ արդար մարդը բնաւ պիտի չսասանի,  
անիկա յաւիտեան պիտի յիշուի:  
Գէշ լուրերէն ան չի վախնար.  
Տիրոջ ապաւինած, վստահութեամբ լեցուն է անոր սիրտը:

### ՆԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՂՈԹՔ

ԲԱՆ ԶԹ

Աստուած եւ Տէր, կեանք եւ արարիչ,  
ողորմած, գթած, լոյս, ներողամիտ, անոխակալ, մարդասէր,  
ամենագութ, պարգեւատու, փրկիչ,  
օրհնեալ, գովեալ, բարեբանեալ,  
դարան ամրութեան, պապսպարան վստահութեան,  
առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ,  
բախիչ մեղքերու, բուժիչ վերքերու, անհասանելիներու հնարք,  
անմարչելիներու՝ մերձաւոր, անյուսութեան ելք,  
անունդ խոստովանուած՝ Աստուծոյ Որդի,  
եւ քեզի հետ հզօր եւ ահաւոր Հօրդ  
եւ քեզի հետ երկրպագելի ամենակալ Սուրբ Հոգիին  
փառք եւ գոհութիւն, յաւիտեանս. ամէն:

**ՕՐՈՒԲԱՆ ՆԻՒԹԸ**  
**ԾՆՆԴՈՑ 4:16-26; 5:1-32**



Կայեն եղաւ մարդասպան հեպտելով Չարին օրինակին:

Աստուծոյ հարցադրումը, որպէսզի Կայեն անդրադառնայ ու դարձի գայ, մի գուցէ ապաշխարէ: Բայց, ընդհակառակը, ան կը մնայ իր ընթացքին մէջ:

Աբէլ թէն ինք այլևս չկայ, բայց իր արեան ներկայութիւնն է որ կը բողոքէ:

Այս հատուածը նաեւ ցոյց կու տայ Աստուծոյ ներողամտութիւնը եւ պատրաստակամութիւնը ընդունելու մեղաւորը:

Կայեն ունի վախը, որ յանկարծ ուրիշ մը զինք չսպաննէ: Ընդհանրապէս մեղաւոր մարդը կը դառնայ ստրուկ վախի, ցանկութեան, յանցանքի եւ բարկութեան:

Չարին օրինակին հեպտելոյն նաեւ կ'ունենայ չարին նման աւարտ եւ ենթակայ կ'ըլլայ անէծքի:

Որքան փոքր պէտք է ըլլալ եւ անգիտ, որ յաճախ այնպէս կը կարծենք, որ մեր կատարածը ոչ որ կը փեսնէ, մոռնալով այն իրողութիւնը, որ առաջին վկան Աստուած ինք է, որ կը փեսնէ ամէն ինչ:

Ստրուկի նման Կայեն նշան մը կը ստանայ: Այս անգամ, սակայն, չարին ստրուկը եղող: Որովհետեւ Քրիստոսի պարկանդուն ալ նշան մը կը ստանայ, բայց Քրիստոսի նշանը:

Պէտք է լաւ իմանանք որ չարիքը մեզ կը հեռացնէ Աստուծմէ:

Նայիդ քաղաքը կը նշանակէ թափառական: Ուստի Կայեն Եդեմը ձգելով գնաց բնակելու Նայիդ երկիրը, ու դարձաւ թափառական:

Հեղափոխականօրէն Կայեն քաղաք մը կը շինէ, իսկ Աբէն՝ ոչ: Սա կը նշանակէ Կայեն կապուած երկրին, իսկ Աբէնի պարագային որպէս Աստուծոյ որդիներ, անոնք մնայուն քաղաք մը չունին:

(ԾՆ 4.23-24). Կը փեսնենք որ մարդկային կեանքին մէջ, անգամ մը որ չարիքը սկիզբ կ'առնէ, եւ նաեւ կը հասնի չարիքներու բարձրագոյնին՝ սպաննութեան, ոչ միայն այդ փրամադրութիւնը նահանջ կ'արձանագրէ, այլ հեղափոխութիւն կը սկսի խորանալ մարդոց մէջ վայրագութիւնը եւ նկարագրային այլախոհութիւնը, միաժամանակ սպաննութիւնը սովորական երեւոյթ կը սկսի դառնալ, եւ հակառակ իրենց մէջ եղող մտավախութեան, մարդիկ չեն հրաժարիր իրենց չարիքներէն, եւ կը փեսնենք որ Կայենի սերունդին մէջ չարութիւնը արմատացած, հեղափոխութիւն այնպիսի համեմատութեանց կը հասնի, որ Աստուծոյ հետ իրենց կապը ամբողջութեամբ կը խզեն եւ Կայենի սերունդը Աստուծմէ հեռացած առաջին սերունդը կ'ըլլայ:

Ղամբով կը սկսի նաեւ երկու կին առնելու սովորութիւնը: Կրօնական օրէնք մը չկար, բայց Ադամի օրինակով աստուածապաշտ սերունդը կը շարունակէր այդ օրէնքին հետեւիլ, մինչդեռ Կայենի սերունդը որ աստուածապաշտութենէ աստիճանաբար հեռացող սերունդն է, սկսաւ երկու եւ աւելի կիներ առնելու սովորութեան հետեւիլ, որ մարդկային ցանկութեան հեպտելու արքայայարութիւնն է:

Ահա Աբէլի փոխարէն կը ծնի Սէթը, իսկ Սէթէն Ենոքս, եւ ահա այն արեւն սկսան Տիրոջ անունը կանչել: Այլ խօսքով Տէրը փնտրել:

**ԱԴԱՄԻՆ ՍԵՐՈՒԲՆԸ (5:1-32)**

Հեղափոխականօրէն երբ Աստուածաշունչը կ'անդրադառնայ Ադամի սերունդի ցանկին երբեք չի յիշեր Կայենը, այլ՝ Սէթը: Եւ ահա սա ցոյց կու տայ թէ Աստուածաշունչ մատենը մեզի կը ներկայացնէ երկու խումբի մարդիկ, Աստուածապաշտ եւ ոչ Աստուածապաշտ, իսկ շեշտը կը դնէ անոնց, որոնք պիտի պահեն ճշմարիտ Աստուածապաշտութեան գիծը:

Ադամ կը նշանակէ հողէն առնուած մարդ, որ կը գործածուի թէ այդ մարդուն եւ կնոջ համար: Այս անուանումը երկու բան կը յիշեցնէ, առաջին մարդուն ծագումը, երկրորդ մարդուն փրումը կոչումը՝ հողէն առնուած: Մնայուն յիշեցում, որ մարդը արարած է եւ ոչ թէ Արարաիչ, որ առաջին իսկ մեղքն էր մարդուն՝ աստուածանալ:

Ադամ իր գաւազը ունեցաւ իր նմանութեամբ, եւ ոչ թէ Աստուծոյ պարկերովն ու նմանութեամբ: Մարդը իր մեղանշունով կորսնցուց այդ աստուծային պարկերն ու նմանութիւնը՝ այսինքն արդարութիւն եւ սրբութիւն:

Սէթի սերունդին մէջ 10 անուններ կը յիշատակուին: Այս թիւը խորհրդանշական է, որ կը նշանակէ ամբողջական սերունդ:

Տակաւին այս թիւերու հետ կապուած այս գլուխին մէջ յիշուած փարեթիւերը իւրաքանչիւրին: Շարեր փորձած են փառացի հասկնալ, իսկ ոմանք ամասթիւեր որպէս, բայց կայ նաեւ մէկ այլ ուրիշ փեսակէտ մը, որ կու գայ բացատրելու եւ ըսելու թէ այս փարեթիւերը ոչ թէ մէկ անձին վերաբերող այլ ամբողջ սերունդ մը մինչեւ յաջորդ նշանաւոր նահապետը: Տակաւին, այս փարեթիւերուն փակ կան նաեւ խորհրդանշական փուլերներ, օրինակ՝ Ենոքի կեանքը՝ 365 փարի, Ղամբկ՝ 777 փարի, որպէս խորհրդանշիչ ամբողջութեան, կատարելութեան:

Հեղափոխական մէկ այլ ուրիշ երեւոյթ Ենոքի պարագան «Ենոք Աստուծոյ հետ քալեց եւ չէր գրնուէր, քանզի Աստուած առաւ զանիկա» (5:24): Առաջին օրինակը մարմնաւոր վերացուելուն, երկրորդը՝ Եղիա մարգարէն: Որպէս օրինակ, մարմնաւորապէս Աստուծոյ ներկայութեան ըլլալու:

Ի վերջոյ Նոյի ծնունդը եւ անոր անուան իմաստը հանգստութիւն: Այդ գալիք հանգստութեան մասին է խօսքը՝ Քրիստոսով: Նոյի օրինակը երկու իմաստով իբրեւ դատապարտութիւն եւ իբրեւ փրկութիւն: